

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

24.12.2011թ

գ. Տորֆավան

Տեղի ունեցավ Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքի ընդհանուր ժողով.

Ժողովին մասնակցում էին համայնքի բնակիչներ, ավագանու անդամներ և մարզպետարանի աշխատակից:

Ժողովի նախագահ իսկ Վարդանյան (համայնքի ղեկավարի տեղակալ)

Ժողովի քարտուղար Ահարոն Խաչատրյան (աշխատակազմի քարտուղար)

Օրակարգ 1. Տորֆավան համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանի 2011 թվականի կատարած աշխատանքների մասին:

Զեկուցողն մանրամասն ներկայացրեց Տորֆավան համայնքում 2011 թվականի ընթացքում կատարած աշխատանքների մասին հաշվետվությունը:

Հաշվետվությունում վեր հանվեց համայնքի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման ուղղությամբ համայնքի ղեկավարի և գյուղապետարանի աշխատակազմի կողմից ձեռնարկված միջոցառումները: Ինչպես համայնքի բյուջեի կատարման, այնպես էլ համայնքում առկա խնդիրների լուծման ուղղությամբ (համայնքի ղեկավարի հաշվետվությունը կցվում է):

Հաշվետվության շուրջ ծավալված մտքերի փոխանակությանը մասնակցեցին համայնքի ավագանին և բնակիչները:

Համայնքի բնակչության կողմից առաջարկվեց համայնքի ղեկավար Ա.Խաչատրյանի կողմից կատարված աշխատանքները գնահատել բավարար:

Համայնքի ընդհանուր ժողովը

ՈՐՈՇԵՑ

1. Համայնքի ղեկավար Ա.Խաչատրյանի 2011 թվականի կատարած աշխատանքների հաշվետվությունը գնահատել բավարար:
2. Պահանջել համայնքի ղեկավար Ա.Խաչատրյանից և գյուղապետարանի աշխատակազմից 2012 թվականի ընթացքում իրենց գործունեությունը նպատակառուղել համայնքում առկա խնդիրների լուծմանը, համայնքի բյուջեի սեփական եկանուտների հավաքագրման կատարմանը և այդ մասին պարբերաբար իրազեկ պահել համայնքի ավագանուն և բնակչությանը:

Ժողովի նախագահ

Ի. Վարդանյան

քարտուղար

Ա. Խաչատրյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Տորֆավան համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանի 2011 թվականի կատարած աշխատանքների մասին

Հարգելի համագյուղացիներ, իյուրեր և ավագանու անդամներ Ձեզ եմ ներկայացնում հաշվետվություն 2011 թվականին ին կողմից Տորֆավան համայնքում կատարած աշխատանքների և բյուջեի կատարման մասին: Տորֆավան համայնքում կա 131 տնտեսություն և ապրում է 531 բնակիչ, որից շուրջ 70% -ը փախստականներ են:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» և Հայաստանի Հանրապետության «Համայնքային ծառայության մասին» օրենքով համայնքի ՏԻՄ մարմինները իրենց գործունեությունը հիմնականում նպատակառուղղվել են համայնքի բնակչության հոգսերի և խնդիրների լուծմանը, համայնքում առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների բարելավման հարցին:

Այդ ընթացքում համայնքում իրականացվել է մի շարք ծրագրեր: 2011 թվականին վերակառուցվել և վերանորոգվել է համայնքային կենտրոնը, ապահովել փափուկ և կոշտ գույքով:

Գյուղապետարանի միջոցներով հարթեցվել և բարեկարգվել է գյուղամիջյան ճանապարհները, գազաֆիկացվել է համայնքը, համայնքի ազգաբնակչության միջոցով մաքրվել է ոռոգման ցանցի ջրատարը, կատարվել է խմելու ջրագծի շուրջ 700 գծ/մ վերանորոգման և մաքրման աշխատանքներ:

Միաժամանակ տեղեկացվում է, որ չնայած կատարված աշխատանքները համայնքում դեռևս առկա է մի շարք հիմնախնդիրներ, կապված ոռոգման ցանցի և խմելու ջրի համակարգի կառուցման հետ, որի հնարավորությունը գյուղապետարանը չունի, խնդիրների լուծումը ընդգրկված է համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագրում և ներկայացվել է վերադաս մարմիններին:

2011 թվականի ընթացքում համայնքի բնակչությունը կողմից ստացվել է տարբեր բնույթի 20 դիմում, որոնց տրվել է համապատասխան ընթացք և լուծում:

2011 թվականի ընթացքում կայացել է ավագանու 9 նիստ:

Համայնքի բնակչությունը հիմնականում գրաղված է գյուղատնտեսությամբ և անասնապահությամբ:

Տորֆավանի գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 6 հոգուց, իսկ համայնքի ավագանին բաղկացած է 5 անդամից:

Համայնքի վարչական տարածքը 701հա է, որից վարելահող 400 հա, տնամերձ 56 հա և 245 հա այլ տեսքի հողեր:

2011 թվականի համայնքի բյուջեի սեփական եկամուտները կազմում է 945.0 հազ. դրամ, որի հավաքագրումը գյուղապետարանի կողմից կատարվել է 155.4%-ով:

Բյուջեն ըստ սեփական Եկամուտների մասի հետևյալն է

h/h	Եկամուտների անվանում	Նախատեսված /հազ.դրամ/	Վաստացի /հազ.դրամ/	Կատարված %-ը
1	Հողի հարկ	388.0	638.8	164.6
2	գույքահարկ	125.0	160.9	128.4
3	հողի վարձավճար	432.0	668.8	154.8

Բյուջեի ծախսը աշխատավարձի և սոց հատկացման հոդվածներով՝

ա/ աշխատավարձ 6120.0 հազ.դրամ
բ/ սոց.հատկացում 1160.0 հազ.դրամ

Տորֆավան համայնքի ղեկավար՝

Ա.Խաչատրյան